Դիզայն- նախագծում

ԱՐՎԵՍՏԱՆՈՅԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԲՈՐԵՅՅԱՆ

2013-14 ուս. տարվա 1-ին կիսամյակ

Սեպտեմբեր

- Մշակութային արշավ **Վայոց ձոր**
- Բացօթյա պլեներ Նորավանքում
- **Քարեր ու գույներ** նախագիծը Վայոց ձորում կյանքի կոչեցինք
- Սիրանույշ ճամբար, բարձրունքի նվաճում

Հոկտեմբեր

- **Հեղինակային կրթական ծրագրերի աշնանային բաց հավաքի շրջանակներում**
- Ոսկե աշուն նախագիծ
- Քարերի սիմֆոնիա





Նյութը և չափը դառնում են դոմինանտ իսկ խնդիրը՝ երևակայական կերպավորումից մինչև երգիծական բնորոշումներ:

- **Իջևանի արվեստի փառատոն** (Միջավայրի գեղարվեստական միջամտություն՝ Էսքիզների մշակում, էքստերիերի վիրտուալ կառուցում և աշխատանքների իրականացում):

Երկու փուլով կատարված գործողություն, արդյունքում իջևանյան քաղաքային միջավայրի աշխույժ թարմացում՝ ժամանակակից արվեստի ներթափանցող ներկայությամբ, և աշակերտների համար մեծ փորձառություն՝ մոնումենտալ արվեստին առավել մտերմանալու և կատարողական վարպետությունը բարձրացնելու գործում:



Նոյեմբեր

- **<Մակերես, տարածություն, շարժում>**/Թբիլիսի/

Այլ երկրում ներկայանալ ուսումնասիրական և ստեղծագործական ողջ պաշարներով բավականին պատասխանատու և պարտավորեցնող խնդիր է, քանզի նորանոր տարածություններ նվաճելու առաքելությանն ուղղված քո մակերեսները ապահովում են այն շարժումը, որի առջև բաց են բոլոր դռները, որոնցից այն կողմ թագավորում է միայն լուռ զրույցը՝ բոլորին հասկանալի լեզվով:

Դեկտեմբեր

- **<Հայ-վրացական կամուրջներ>**/Էքսպոզիցիա/

Խնդիրը փոքր-ինչ փոխվում է, երբ տանտիրոջ կարգավիճակում ես ու քո բարեկամին պետք է ներկայացնես և' փնտրումներիդ արդյունքները և' այն միջավայրը, որի ծնունդն դրանք:

❖ <Բարև պարոն Պիկասո>

Իմանալ գեղարվեստական արտահայտչամիջոցների ոճերն ու սկզբունքները, կատարել փորձ-վարժություններ և որոշակիորեն տիրապետել դրանք, դեռևս բավարար չէ, քանզի երբ դրվում է առավել ընդգրկուն մարտահրավեր՝ ըմբռնել և սեփական փորձով անցնել 20-րդ դարի մեծագույն արվեստագետներից մեկի՝ Պ. Պիկասոյի հարթած ճանապարներով, հասկանալի է դառնում խնդրի բարդությունն ու տարողունակությունը:
Թաքնված պարզության տակ վարպետության բազմաշերտ հետքերն են, որտեղից տեսանելի է միայն վերջինը: Կկարողանաս տեսնել դրանք և ինքդ թողնես հետքեր, սա է հրամայականը; Ուսուցանողները դա կարողացան անել:





Արվեստանոցում մշտապես հյուրընկալում հյուրեր

- **Ձմեռային ուսումնահետազոտական ճամբար**

  Նոր ու անսովոր փորձառություն ճամփաբաժանին՝ հիմնական դպրոցի ապագա շրջանավարտների առաջին թռիչք-փորձերը գեղարվեստի երկնոլորտում:



❖ Ամանորին նախապատրաստվեցինք բազոում ծրագրերով